ՀԱՎԵԼՎԱԾ 1. «Երիտասարդները հանուն փոփոխության» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ դիտորդական առաքելության վարքագծի կանոններ

- Դիտորդը պետք է լինի չեզոք և անկողմնակալ, զերծ մնա ցանկացած գործողություն կատարելուց, որը կմեկնաբանվի որպես աջակցություն, քարոզչություն կամ հակաքարոզչություն որևէ կուսակցության (դաշինքի) կամ թեկնածուի օգտին:
- Դիտորդը պետք է բարեխղճորեն և լիարժեք կատարի դիտորդական առաքելությունը՝ առաջնորդվելով ՀՀ Ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքներով և պարտականություններով, սույն վարքագծի կանոններով, դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության կողմից տրված հրահանգներով և ուսումնական նյութերով:
- Դիտորդն իր առաքելությունը պետք է իրականացնի առանց ընտրական հանձնաժողովների բնականոն աշխատանքը խոչընդոտելու՝ չմիջամտելով ընտրական հանձնաժողովների աշխատանքներին, նախընտրական շրջանի, քվեարկության և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացին:
- Հատկացված տարածքում նախընտրական միջավայրի, տրամադրությունների, նախընտրական քարոզարշավի և հետընտրական գործընթացների բոլոր ասպեկտների վերաբերյալ դիտարկումներում, գնահատականներում և զեկույցներում Դիտորդը պարտավոր է լինել օբյեկտիվ, փորձելով արտացոլել ընտրական գործընթացի բոլոր մասնակիցների կարծիքները/տեսակետները՝ հաստատելով տեղեկատվությունը մի քանի անկախ աղբյուրների միջոցով:
- Դիտորդը պետք է հնարավորինս ձեռնպահ մնա անձնական տվյալներ (օրինակ՝ հեռախոսահամար, հասցե, ընտանիքի, բնակավայրի, ընկերների և հնարավոր ծանոթների մասին տեղեկատվություն) տրամադրելուց:
- Դիտորդին արգելվում է առանց Համակարգող կենտրոնի համաձայնության հրապարակել կամ երրորդ անձանց փոխանցել դիտորդական առաքելության շրջանակներում իրեն հայտնի դարձած տեղեկությունները, դիտորդական մեթոդաբանությանը, ուսումնական նյութերին, շտեմարաններին առնչվող տվյալները:
- Դիտորդն իր իրավունքների սահմանափակման, խոչընդոտման, ինչպես նաև ֆիզիկական բռնության կամ բռնության սպառնալիքի դեպքում պետք է այդ մասին անհապաղ տեղեկացնի Համակարգող կենտրոնին:

- Դիտորդը Համակարգող կենտրոնին պետք է անմիջապես տեղեկացնի ցանկացած այլ հանգամանքի մասին, որը կարող է խոչընդոտել կամ արգելք հանդիսանալ իր կողմից դիտորդական առաքելության պատշաճ իրականացմանը:
- Դիտորդը պետք է համագործակցություն ցուցաբերի Համակարգող կենտրոնի հետ՝ իր կողմից հայտնաբերված խախտումների հիման վրա կազմված բողոքարկումների և հաղորդումների ներկայացման գործընթացում:
- Հանձնաժողովների անդամների, իրավապահ մարմինների և ընտրական գործընթացի այլ մասնակիցների հետ հարաբերություններում Դիտորդը պարտավոր է դրսևորել հարգալից վերաբերմունք, զերծ մնալ ցուցումներ տալուց և վիճաբանելուց:
- Իր գործունեության ընթացքում Դիտորդը պարտավոր է զերծ մնալ ցանկացած գործողությունից, վարքագծից և հրապարակային հայտարարությունից, որոնք կարող են վարկաբեկել առաքելությունն ու դիտորդական նախաձեռնությունը:
- Հարցազրույցներ տալիս Դիտորդը նախապես պետք է համաձայնեցնի Համակարգող կենտրոնի հետ, այնուհետև պետք է ներկայացնի միայն դիտարկած միջադեպի նկարագիրը՝ խուսափելով որևէ գնահատականից:
- Դիտորդին խորհուրդ է տրվում, ըստ անհրաժեշտության, նշել հետևյալը. *«Դիտորդությունն իրականացվում է «Երիտասարդները հանուն փոփոխության» (ԵՀՓ) քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի կողմից: Քվեարկության ավարտից հետո ՀԿ-ն կհրապարակի ամբողջական զեկույց նախընտրական շրջանի, քվեարկության և քվեարկության արդյունքների վերաբերյալ»:*

Վարքագծի կանոնների չպահպանման դեպքում դիտորդը կարող է զրկվել դիտորդական վկայականից և հեռացվել «Երիտասարդները հանուն փոփոխության» (ԵՀՓ) քաղաքացիական հասարակության զարգացման հասարակական կազմակերպության դիտորդական առաքելությունից: